



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հոկտեմբերի 2010թ.

N 666-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրի կատարումն ապահովելու նպատակով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

2. Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման համար պատասխանատու մարմինների ղեկավարներին՝

1) յուրաքանչյուր տարվա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի վերաբերյալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմ առաջարկություններ ներկայացնելիս՝ առաջնորդվել նաև Ծրագրով.

2) Ծրագրի յուրաքանչյուր միջոցառման իրականացման համար ստեղծել համապատասխան համակարգող խումբ՝ ընդգրկելով նաև համակատարող մարմինների ղեկավարների տեղակալներին կամ համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին.

3) ապահովել Ծրագրով նախատեսված՝ մշակման ենթակա ծրագրերի հանրային քննարկումների կազմակերպումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԾՐԱԳԻ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Ծրագրի դրույթները	Միջոցառումները	Իրականացնող մարմինները		Կատարման ժամկետը	Ապահովման առանձնահատկությունները
		պատասխանատու	համակատարող		
1	2	3	4	5	6
4. Կառավարության գործունեության հիմնական ուղղությունները					
4.1. Կառավարման համակարգի բարեփոխումները և կոռուպցիայի դեմ պայքարը					
4.1.1. Արդյունավետ պետական կառավարումը					
1. Կառավարությունը, պետական կառավարման համակարգի կադրային ներուժի հետևողական ամրապնդման նպատակով, մտադիր է ավելացնել համակարգում աշխատելու գրավչությունը՝ աշխատանքի որակը եւ աշխատավարձի մակարդակը՝ մրցունակ դարձնելով համապատասխան շուկայի մասնավոր հատվածին	1.1 Աշխատանքի որակի և աշխատավարձերի մասնավոր հատվածի նկատմամբ մրցունակության աստիճանական բարձրացման նպատակով՝ աշխատանքի կատարողականի վրա հիմնված նյութական խրախուսման համակարգի ներդրում	ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարություն	ԼՂՀ նախարարություններ և գերատեսչություններ	2012թ.	
2. Կառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացում և ընդունվող որոշումներին հասարակության մասնակցության ընդլայնում	2.1 Էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրում	ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն		2012թ.	
	2.2 Պետական կառավարմանը ոչ հատուկ գործառույթներից հրաժարման առաջարկությունների և մեխանիզմների մշակում՝ մասնավոր-պետական համագործակցության կիրառմամբ		ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն	ԼՂՀ արդարադատության նախարարություն	2012թ.

3. Կառավարությունը շարունակելու է դատական իշխանության լիարժեք անկախության եւ արդյունավետ գործունեության ապահովմանն ուղղված դատաիրավական բարեփոխումների իրականացումը	3.1 Դատաիրավական բարեփոխումների 2010-2012թթ. ռազմավարական գործողությունների ծրագրի մշակում	ԼՂՀ արդարադատության նախարարություն		2010թ. IV եռամսյակ	
4. Պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացում և պետությանը պատկանող գույքային իրավունքների համապարփակ հաշվառման կիրառում	4.1 Գործող հաշվառման համակարգում դեռևս չընդգրկված պետական գույքի (անշարժ և շարժական) և պետությանը պատկանող գույքային իրավունքների լիարժեք հաշվառման գործընթացի կազմակերպում	ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն	ԼՂՀ նախարարություններ և գերատեսչություններ	2010-2012թթ.	
	4.2 Պետության, որպես գույքի սեփականատեր, շուկայական հարաբերություններում լիարժեք մասնակցությունն ապահովելու համար իրավական հիմքերի ստեղծում	ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն		2011թ.	
4.1.2. Տարածքային կառավարումը եւ տեղական ինքնակառավարումը					
1. Կարելիություն է ստեփանակերտ քաղաքում տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման առանձնահատկությունների հստակեցումը եւ սահմանումը	1.1 «Ստեփանակերտ քաղաքում տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման առանձնահատկությունների մասին» ԼՂՀ օրենքի նախագծի մշակում	ԼՂՀ կառավարության աշխատակազմ	Ստեփանակերտի քաղաքապետարան	2012թ.	
4.2. Տնտեսական ոլորտը					
4.2.1. Տնտեսական զարգացումը					
<i>Տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովումը</i>					
1. Տարեկան ՀՆԱ-ի 9-11 տոկոս իրական աճ, որը հնարավորություն կտա լուծել տնտեսական եւ սոցիալական մի շարք հիմնախնդիրներ	1.1 Տնտեսության տարբեր ճյուղերի ներուժի գնահատում և դրանց զարգացման ուղղությունների մշակում	ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն	ԼՂՀ նախարարություններ և գերատեսչություններ	2010-2012թթ.	

2. Տնտեսական աճի որակական փոխակերպման և արդյունավետ կառուցվածքային տեղաշարժերի կառավարելի համակարգի ձևավորում	2.1 Տնտեսական աճի երկարաժամկետ պլանավորման գործում հարկաբյուջետային քաղաքականության ազդեցության մոդելավորման իրականացում	ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն	ԼՂՀ ֆինանսների նախարարություն	2012թ.	
	2.2 Բարձր տեխնոլոգիաներ կիրառող ռեսուրսախնայող եւ գիտատար տնտեսությանը միտված ոլորտների ձևավորմանը նպաստող միջոցառումների իրականացում	ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն			2010-2012թթ.
3. Երկրի մրցունակության բարձրացում	3.1 Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հայեցակարգի կատարելագործում	ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն		2011թթ.	
	3.2 Հեղինակավոր ընկերությունների մուտքի քաջալերում	ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն		2010-2012թթ.	
4. Երկրի բացասական արտաքին հաշվեկշռի մեղմացում	4.1 Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման հաշվին արտադրական կարողությունների ընդլայնման, արտահանման խթանման և համաշխարհային չափանիշերին համապատասխանող հայրենական ընկերությունների կայացմանն աջակցման միջոցառումների իրականացում	ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն		2010-2012թթ.	
	4.2 Տեղական շուկաներում ներմուծումը փոխարինող տեղական արտադրանքի առաջնիւման ծրագրի մշակում	ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն		2011թ.	
5. Երկրի՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ եւ անվտանգ միջավայրի միջազգային վարկի ձեւավորում	5.1 Ջբոսաշրջության զարգացման հայեցակարգի մշակում	ԼՂՀ կառավարությանն առընթեր զբոսաշրջության վարչություն	ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն	2011թ. III եռամսյակ	
6. Տեղեկատվական հասարակության վերջնական ձեւավորումը	6.1 ԼՂՀ-ում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգի մշակում	ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն		2011թ.	

<i>Ջրաղվածությունը, աշխատանքի արտադրողականությունը եւ եկամուտները</i>					
7. Կառավարությունը կծգտի գործազրկության մակարդակի էական կրճատման՝ նոր աշխատատեղերի ստեղծմանը նպաստելու միջոցով, ընդ որում, հիմնականում Ստեփանակերտից դուրս	7.1 ԼՂՀ զբաղվածության ռազմավարության մշակում	ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարություն	ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն	2011-2012թթ.	
<i>Տարածքային անհամաչափ զարգացման համահարթեցումը</i>					
8. ԼՂՀ տարածքների, առանձնապես ռազմավարական նշանակություն ունեցող բնակավայրերի,	8.1 Պետական ծրագրերում տարածքային համաչափ զարգացում ապահովող սկզբունքների մշակում	ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն		2011-2012թթ.	
զարգացման տեմպերի արագացում, գործարար միջավայրի որակի բարձրացում եւ ներդրումային ակտիվության էական աճի ապահովում	8.2 Համայնքներում ձեռնարկատիրությանը ֆինանսական եւ ներդրումային աջակցության ծրագրի իրականացում	ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն	ԼՂՀ ֆինանսների նախարարություն, Արցախի ներդրումային հիմնադրամ, ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ	2010-2012թթ.	
	8.3 Գյուղերում եւ շրջկենտրոններում բնակվող քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավման ֆինանսական աջակցության ծրագրերի շարունակում	ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն	ԼՂՀ ֆինանսների նախարարություն, ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն, Արցախի ներդրումային հիմնադրամ	2010-2012թթ.	
9. Շրջաններում հանրային ծառայությունների տեղայնացման մակարդակի բարձրացման ապահովում	9.1 Էլեկտրոնային կրթության, էլեկտրոնային բժշկության եւ այլ էլեկտրոնային սոցիալական ծառայությունների կազմակերպման համար նախապատրաստական աշխատանքների իրականացում	ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն	ԼՂՀ կրթության և գիտության նախարարություն, ԼՂՀ առողջապահության նախարարություն, ԼՂՀ ԿԱ արտադրական ենթակառուցվածք-ների վարչություն	2012թթ.	
4.2.2. Գործարար եւ ներդրումային միջավայրը					
1. Գործարար եւ ներդրումային միջավայրի որակական բարելավում	1.1 ԼՂՀ գործարար միջավայրի բարելավման ծրագրի կատարելագործում	ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն		2010թ.	
	1.2 Բիզնես-ենթակառուցվածքների՝ աուդիտորական, ապահովագրական և հաշվապահական ծառայությունների խթանման միջոցառումների իրականացում	ԼՂՀ ֆինանսների նախարարություն		2011-2012թթ.	

2. Գործարար էթիկայի կանոնների և ստանդարտների ներդրմանն ուղղված քաղաքականության իրականացում	2.1 Միջազգային չափանիշներին համապատասխան համապատասխանության գնահատման համակարգի ձևավորում և համապատասխան սերտիֆիկացման մարմնի կայացմանը նպաստում	ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն		2011թ.	
3. Փոքր եւ միջին ձեռնարկատիրության համար առավել նպաստավոր պայմանների ստեղծում	3.1 Փոքր եւ միջին ձեռնարկատիրության աջակցման ծրագրի շարունակում` բարձրացնելով դրա արդյունավետությունը եւ առանձնակի կարելորելով սուբյեկտների տեխնոլոգիական վերազինումը և ինովացիոն ձեռնարկատիրության զարգացումը	ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն	Արցախի ներդրումային հիմնադրամ, ԼՂՀ ֆինանսների նախարարություն	2010-2012թթ.	
4. Կորպորատիվ կառավարման մշակույթի ձևավորում	4.1 Կորպորատիվ կառավարման կանոնագրքի մշակում	ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն	Արցախի ներդրումային հիմնադրամ	2011թ.	

4.2.3. Ֆինանսական միջնորդությունը

1. Կառավարությունն առաջնահերթ է համարում գյուղատնտեսության ոլորտի, ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության, ինչպես նաև ֆինանսական ռիսկերի (վարկի, ներդրումների) ապահովագրումը	1.1 Ապահովագրության արդյունավետ մեխանիզմների մշակում եւ կիրառում	ԼՂՀ ֆինանսների նախարարություն	ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն, ԼՂՀ կառավարությանն առընթեր ԼՂՀ ոստիկանություն, ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն	2012թ.	
2. Հիփոթեքային շուկայի զարգացում	2.1 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավմանն ուղղված ֆինանսական աջակցության ծրագրի իրականացում	ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն	ԼՂՀ ֆինանսների նախարարություն, Արցախի ներդրումային հիմնադրամ	2010-2012թթ.	

4.2.4. Բյուջետային համակարգը

1. Պետական գնումների համակարգի արդյունավետության բարձրացում և գործընթացի թափանցիկության ապահովում	1.1 Գնումների մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության բարելավում եւ էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման համար նախադրյալների ստեղծում	ԼՂՀ ֆինանսների նախարարություն		2011-2012թթ.	
---	---	-------------------------------	--	--------------	--

2. Պետական ծախսերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ծրագրային բյուջետավորման ներդրում	2.1 Ծրագրային բյուջետավորման ներդրման համար նախադրյալների ստեղծում	ԼՂՀ ֆինանսների նախարարություն		2012թ.	
4.2.5. Հարկային համակարգը					
1. Ծրագրվում է ներդնել հաշվետվությունների ընդունման էլեկտրոնային համակարգը՝ հնարավորինս նվազեցնելով պաշտոնյաների եւ գործարարների	1.1 Էլեկտրոնային տարբերակով ներկայացվող հաշվետվությունների ընդունման համակարգի մշակում	ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն		2010-2011թթ.	«Գործարար միջավայրի բարելավման» և «Էլեկտրոնային կառավարման
ուղղակի շփումները	1.2 Էլեկտրոնային տարբերակով ներկայացվող հաշվետվությունների ընդունման համակարգի ներդրում	ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն		2012թ.	համակարգի ներդրման» ծրագրերի շրջանակներում
2. Նախատեսվում է անցում ռիսկային չափանիշների վրա հիմնված ստուգումներին	2.1 Ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի փորձնական ներդրում	ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն		2010թ.	«Գործարար միջավայրի բարելավման» ծրագրի շրջանակներում
	2.2 Համակարգի իրավական հիմքերի և ընթացակարգերի սահմանում	ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն		2011թ.	
	2.3 Համակարգի համատարած կիրառում	ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն		2012թ.	
3. Հարկային համակարգի կատարելագործման հիմնական ուղղություններից կլինի արտահանվող եւ ներմուծվող ապրանքների նկատմամբ հաշվառման կատարելագործումը	3.1 ԼՂՀ տարածք ներմուծվող և արտահանվող ապրանքանյութական արժեքների հաշվառման իրավական հիմքերի և ընթացակարգերի սահմանում	ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն	ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն, ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն	2010թ.	

4.2.6. Հեղինակային եւ գույքային իրավունքները

<p>1. Մտավոր սեփականության հուսալի եւ արդյունավետ պաշտպանություն, ոչ գույքային իրավունքների գրանցման գործընթացների ապահովում</p>	<p>1.1 Մտավոր սեփականության օբյեկտների իրավական պահպանման ապահովում</p>	<p>ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն</p>	<p>2010թ. IV եռամսյակ</p>	
<p>2. Անշարժ գույքի միասնական կադաստրի վարման համակարգի արդյունավետ կառավարման ապահովման նպատակով նախատեսվում է իրականացնել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների եւ սահմանափակումների իրական ժամանակում գրանցման ավտոմատացված համակարգի ներդրման աշխատանքներ</p>	<p>2.1 Անշարժ գույքի կադաստրի վարման ավտոմատացված համակարգի նախագծում, մշակում և տեղեկատվական բանկի ստեղծում</p>	<p>ԼՂՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտե</p>	<p>2012թ.</p>	
<p>3. Նախատեսվում է շարունակել պետական մասշտաբային շարքի բազային քարտեզների (տեղագրական, կադաստրային) թվային ֆոնդի ստեղծման եւ թարմացման աշխատանքները՝ հիմնված նորագույն՝ արբանյակային, օդային եւ վերգետնյա հանութային տեխնոլոգիաների վրա, շարունակել արբանյակային տեխնոլոգիաների հիման վրա պետական գեոդեզիական պլանային եւ բարձունքային ցանցի արդիականացման, բազային երկրատեղեկատվական համակարգի ներդրման աշխատանքները</p>	<p>3.1 ԼՂՀ տարածքներում համայնքների բնակավայրերի 1:2000 մասշտաբի տեղագրական հանութագրման և 2000-2004 թթ. կատարված կադաստրային քարտեզագրման աշխատանքներում ի հայտ եկած սխալների ուղղման ծրագրի շարունակում</p>	<p>ԼՂՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտե</p>	<p>2010-2012թթ.</p>	
<p>3.2 ճանապարհային ցանցի և ինժեներական կառույցների քարտեզագրում</p>		<p>ԼՂՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտե</p>	<p>2011թ.</p>	
<p>4. Նախատեսվում է շարունակել աշխարհագրական անվանումների հաշվառում և գրանցում, պետական քարտադարանի ստեղծում</p>	<p>4.1 ԼՂՀ աշխարհագրական անվանումների հաշվառում և գրանցում, պետական քարտադարանի ստեղծում</p>	<p>ԼՂՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտե</p>	<p>2010-2012թթ.</p>	

<p>5. Նախատեսվում է աշխատանքներ իրականացնել շարժական գույքի կադաստրի եւ շարժական գույքի նկատմամբ իրավունքների գրանցման միասնական տեղեկատվության բանկ ստեղծելու եւ վարելու ուղղությամբ, ինչը թույլ կտա շարժական գույքը դիտարկել որպես շուկայական գործարքների լիարժեք օբյեկտ</p>	<p>5.1 Շարժական գույքի գրանցման համակարգում դեռևս չընդգրկված գույքի տեսակների գրանցման մեխանիզմների մշակում և կիրառում</p>	<p>ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի կոմիտե</p>	<p>ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն, ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն</p>	<p>2011թ.</p>	
--	--	---	---	---------------	--

4.2.7. Տնտեսության հիմնական ճյուղերը

4.2.7.1. Արդյունաբերությունը

<p>1. Հանրապետության համար հատուկ նշանակություն ունի սննդի արդյունաբերության զարգացումը՝ առանձնապես տեղական գյուղատնտեսական մթերքների վերամշակման բնագավառում՝ ձևավավորելով ամբողջական արժեչղթա</p>	<p>1.1 «Արդյունաբերական համալիրի» ստեղծման ծրագրի մշակում՝ տեղական հունքի ավարտում տեխնոլոգիական ցիկլի ապահովման նախատեսմամբ</p>	<p>ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն</p>		<p>2011թ.</p>	
	<p>1.2 Ներմուծումը փոխարինող արտադրության խթանման ծրագրի մշակում</p>	<p>ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն</p>		<p>2011-2012թթ.</p>	<p>Տեղական շուկաներում տեղական արտադրանքի առաջնղման ծրագրի շրջանակներում</p>
<p>2. Աշխատանքներ են տարվելու գիտության եւ նորարարության արդյունքներն արդյունաբերության մեջ ներղնելու ուղղությամբ</p>	<p>2.1 Իննովացիոն ձեռնարկատիրությանն աջակցության ծրագրի մշակում</p>	<p>ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն</p>	<p>ԼՂՀ կրթության և գիտության նախարարություն</p>	<p>2012թթ.</p>	

4.2.7.2. Գյուղատնտեսությունը

<p>1. Գյուղատնտեսության բնագավառում կառավարության քաղաքականությունն ուղղված է լինելու հանրապետության պարենային ապահովման բարձրացմանը, գյուղի զարգացման, գյուղացու եկամուտների առաջանցիկ ավելացման ռազմավարական նպատակների</p>	<p>1.1 Գյուղացիական տնտեսությունների միավորման և փայատիրական ագրոտնտեսությունների մոդելի մշակում</p>	<p>ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն</p>	<p>ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ, ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն</p>	<p>2011թ.</p>	
	<p>1.2 Գյուղմթերքների իրացման և նախնական վերամշակման կետերի ցանցի ձևավորման ծրագրի մշակում</p>	<p>ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն</p>	<p>ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն</p>	<p>2011թ.</p>	

իրականացմանը	1.3 ԼՂՀ-ում հացահատիկային մշակաբույսերի սերմնաբուծության զարգացման ծրագրի մշակում	ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն		2011թ.	
	1.4 ԼՂՀ-ում անասնաբուծության զարգացման և մթերատվության բարձրացման ծրագրի մշակում	ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն		2010թ. IV եռամսյակ	
	1.5 ԼՂՀ Մարտակերտի շրջանի Մաղավուզի ենթաշրջանի համայնքներում գյուղատնտեսության զարգացման ծրագրի մշակում	ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն		2010թ. IV եռամսյակ	
2. Գյուղատնտեսական վարկերի մատչելիության բարձրացում	2.1 Բնագավառի ֆինանսական աջակցության նպատակային ծրագրերի շարունակում եւ ընդլայնում	ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն	ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ	2010-2012թթ.	
4.2.8. Սպառողների շահերի պաշտպանության համակարգը					
1. Սպառողների շահերի պաշտպանության համակարգի բարելավում	1.1 Միջազգային չափանիշներին համապատասխան սպառողների շահերի պաշտպանության համակարգի ապահովմանն ուղղված՝ օրենսդրական բարեփոխումների իրականացում	ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն		2012թ.	
2. Կառավարությունը էապես կբարելավի սննդամթերքի անվտանգության ապահովումը՝ հիմք ընդունելով միջազգային լավագույն փորձը	2.1 Սննդամթերքի անվտանգության ապահովման նպատակով վտանգների աղբյուրների վերլուծության և կրիտիկական կետերի հսկման (ՎԱՎԿԿՀ, HACCP) համակարգի սկզբունքների վրա հիմնված ինքնահսկման համակարգի ներդրման աջակցություն	ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն		2010-11թթ.	
4.2.9. Բնապահպանությունը եւ բնօգտագործումը					
1. Բնապահպանության ոլորտում ԼՂՀ կառավարության կարեւորագույն նպատակներից կլինի անտառների պահպանության, պաշտպանության,	1.1 Անտառային միջոցառումների ծրագրի մշակում	ԼՂՀ կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչություն		2011թ. I եռամսյակ	

վերարտադրության եւ օգտագործման բնագավառում պետական ծրագրերի կատարելագործումը	1.2 Գիշատիչների գլխաքանակի կարգավորման միջոցառումների ծրագրի մշակում	ԼՂՀ կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչություն		2011թ. I եռամսյակ	
2. Բնապահպանության ոլորտում ԼՂՀ կառավարության կարելորագույն նպատակներից կլինի բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծումը եւ դրանց կառավարումը	2.1 Բնության հատուկ պահպանվող տարածքի ստեղծում	ԼՂՀ կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչություն		2012թ. IV եռամսյակ	
3. Բնապահպանության ոլորտում ԼՂՀ կառավարության կարելորագույն նպատակներից կլինի բնության հուշարձանների հաշվառումը եւ դրանց ցանկի ստեղծումը	3.1 Բնության հուշարձանների ցանկի հաստատում	ԼՂՀ կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչություն		2011թ. IV եռամսյակ	
4. Ընդերքի պահպանությունը, արդյունավետ օգտագործման ու վերարտադրության ապահովումը և երկրաբանական վերահսկողության իրականացումը	4.1 Ընդերքօգտագործման ոլորտի ռազմավարության մշակում եւ օրենսդրական դաշտի կատարելագործում	ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն		2010-2011թ.	
	4.2 Երկրաբանական ֆոնդի ձեւավորումը	ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն		2011-2012թթ.	
4.2.10. Արտադրական ենթակառուցվածքները					
4.2.10.1. Էներգետիկ համակարգը					
1. Էներգետիկայի համակարգում իրականացվող ԼՂՀ կառավարության քաղաքականությունը ուղղված կլինի ԼՂՀ ջրային պաշարների յուրացման եւ էլեկտրական ցանցերի վերակառուցման ու տեխնիկական վերազինման պետական նպատակային ծրագրերի իրագործմանը	1.1 «ԼՂՀ էլեկտրական ցանցերի վերակառուցման և տեխնիկական վերազինման մասին» հանրապետական նպատակային ծրագրի շարունակում	ԼՂՀ կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչություն		2010-2012թթ.	
	1.2 «ԼՂՀ ջրային պաշարների յուրացում» հանրապետական նպատակային ծրագրի շարունակում	ԼՂՀ կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչություն	ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն	2010-2012թթ.	

4.2.10.3. Տրանսպորտը եւ կապը

<p>1. Կապի բնագավառում կառավարությունը հետամուտ կլինի ԼՂՀ տարածքում ռադիոհաղորդումների եւ հեռուստահաղորդումների հեռարձակման թվային համակարգի ներդրմանը</p>	<p>1.1 ԼՂՀ-ում ռադիոհեռուստատեսության բնագավառում հեռարձակման զարգացման և թվային համակարգի ներդրման ծրագրի շարունակում</p>	<p>ԼՂՀ կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչություն</p>		<p>2010-2012թթ.</p>	
--	--	---	--	---------------------	--

4.2.11 Քաղաքաշինությունը

<p>1. Կկատարելագործվի օրենսդրությունը, կկանխարգելվի ապօրինի եւ անորակ շինարարությունը: Առավելագույնս կպարզեցվեն ոլորտին առնչվող ընթացակարգերն ու վարչարարությունը</p>	<p>1.1 Քաղաքաշինության բնագավառում գործունեության լիցենզավորման կարգերի կատարելագործում և նոր կարգերի մշակում</p>	<p>ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն</p>		<p>2010թ. III եռամսյակ</p>	
---	---	---	--	----------------------------	--

4.3. Սոցիալական ոլորտը եւ ժողովրդագրությունը

4.3.1. Առողջապահությունը

<p>1. Առաջնային բուժօգնության բնագավառի հետագա զարգացումը, լիարժեք պայմանների ապահովումն ու բարելավումը՝ առանձնապես գյուղական բնակավայրերում: Բուժօգնության առաջնային</p>	<p>1.1 Շրջկենտրոններում ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայությունը ժամանակակից լաբորատոր-գործիքային բուժսարքավորումներով, սանիտարական ավտոտրանսպորտով հագեցվածությամբ, շենքային պայմանների բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացում</p>	<p>ԼՂՀ առողջապահության նախարարություն</p>		<p>2010-2012թթ.</p>	
<p>օղակում կառավարությունը կարելուորում է նորագույն տեխնիկայով ու սարքավորումներով հագեցման, բժշկական մասնագետների վերապատրաստման եւ մասնագիտական կատարելագործման անհրաժեշտությունը</p>	<p>1.2 Առողջ ասրելակերպի ձևավորմանն ուղղված քարոզչական միջոցների մշակում ու իրականացում</p>	<p>ԼՂՀ առողջապահության նախարարություն</p>	<p>ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, ԼՂՀ կառավարությանն առընթեր սպորտի պետական կոմիտե</p>	<p>2010-2012թթ.</p>	

	1.3 Բժշկական կադրերով համալրմանն ուղղված միջոցառումների, այդ թվում՝ բուժանձնակազմի մասնագիտական վերապատրաստումների իրականացում	ԼՂՀ առողջապահության նախարարություն		2010-2012թթ.	
2. Նախատեսվում է համակարգի բուժօգնությունների շենքային պայմանների բարելավում՝ առանձնապես հանրապետական հիվանդանոցի նոր մասնաշենքի կառուցում եւ տեխնիկական սարքավորումներով ապահովում	2.1 «Հանրապետական հիվանդանոց» ՓԲԸ-ի նոր շենքի կառուցման ավարտ և բուժսարքավորումներով հագեցվածություն, համապատասխան մեղ մասնագետներով համալրում, այդ թվում և հրավիրված	ԼՂՀ առողջապահության նախարարություն		2012թ.	
3. Կառավարությունը գերակա է համարում բնակչության հիգիենիկ եւ համաճարակային անվտանգության ապահովումը, սոցիալական նշանակություն ունեցող հիվանդությունների կանխարգելումը, դրանց վաղ հայտնաբերումն ու բուժումը	3.1 Կառավարվող ինֆեկցիաների դեմ պայքարի գործընթացում պատվաստումների օրացույցի վերանայում	ԼՂՀ առողջապահության նախարարություն		2011թ.	
4. Կառավարությունը գերակա է համարում նոր եւ մանկան առողջության ապահովումը	4.1 «Ծննդօգնության պետական հավաստագրի» համակարգի մշակում և ներդրում՝ ոլորտում որակ, արդյունավետություն, մատչելիություն և վերահսկողություն ապահովելու նպատակով	ԼՂՀ առողջապահության նախարարություն		2012թ.	
5. Անհրաժեշտ է համարվում բուժօգնության որակի ապահովման եւ վերահսկման ստանդարտների, ինչպես նաեւ վերանայված սանիտարական նորմերի եւ կանոնների ներդրման գործընթացը	5.1 Սանիտարական նորմերի և կանոնների մշակում և ներդրում	ԼՂՀ առողջապահության նախարարություն		2010-2012թթ.	

<p>6. Կառավարությունը մտադիր է նաեւ օրենսդրությամբ նախատեսված լիազորությունների շրջանակներում ուժեղացնել առողջապահության համակարգի կառավարման գործում պետության կարգավորիչ ու վերահսկիչ դերը</p>	<p>6.1 MIDAS տեղեկատվական վերլուծական համակարգչային ծրագրի ներդրում՝ առողջապահության նախարարության կողմից բուժհիմնարկներում բուժօգնության իրականացման վերահսկողությունը և դրանց կապակցությամբ ներկայացվող հաշվետվությունները արդյունավետ դարձնելու նպատակով</p>	<p>ԼՂՀ առողջապահության նախարարություն</p>		<p>2011թ.</p>	
<p>7. Կառավարությունը կարելի է ուղղորտում ապահովագրական համակարգի ներդրումը</p>	<p>7.1 Բժշկական պարտադիր և կամավոր ապահովագրական համակարգի ներդրման նախադրյալների ստեղծում</p>	<p>ԼՂՀ ֆինանսների նախարարություն</p>	<p>ԼՂՀ առողջապահության նախարարություն</p>	<p>2011-2012թթ.</p>	
<p>4.3.2. Սոցիալական ապահովությունը, սոցիալական ապահովագրությունը եւ ժողովրդագրությունը</p>					
<p>1. Կառավարությունը կշարունակի եւ կկատարելագործի գործող ամուսնության, ծնելիությունը խթանող նպաստների, դրամական օգնությունների եւ այլ ծրագրերի իրականացման քաղաքականությունը՝ զգալիորեն մեծացնելով ծրագրերի ծավալներն ու հասցեականությունը</p>	<p>1.1 Պետական նպաստների համակարգի կատարելագործում, առանձին կատեգորիաների անձանց տրվող նպաստի չափի բարձրացում</p>	<p>ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարություն</p>		<p>2010-2012թթ.</p>	
	<p>1.2 Երեխաների իրավունքների պաշտպանության ծրագրի մշակում</p>	<p>ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարություն</p>		<p>2011թ.</p>	
	<p>1.3 «Դրամական օժանդակություն հաշմանդամներին՝ ինքնազբաղվածության ապահովման նպատակով» ծրագրի մշակում</p>	<p>ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարություն</p>		<p>2010թ. IV եռամսյակ</p>	
<p>2. Կառավարության կողմից աշխատանքներ կտարվեն ամուսնացող երիտասարդներին տրամադրվող եւ երեխաների ծնունդներին զուգահեռ մասնակի զեղչերի մեխանիզմ ներառող ամուսնական վարկերի համակարգի ներդրման ուղղությամբ</p>	<p>2.1 Ամուսնացող երիտասարդներին տրամադրվող և երեխաների ծնունդներին զուգահեռ մասնակի զեղչերի մեխանիզմ ներառող ամուսնական վարկերի համակարգի մշակում</p>	<p>ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարություն</p>	<p>ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն</p>	<p>2011-2012թթ.</p>	

3. Կշարունակվի քաղաքացիների անհատական (անձնավորված) հաշվառման համակարգի ներդրումը, որը հիմք կհանդիսանա հանրապետությունում բազմաստիճան կենսաթոշակային ապահովության (այդ թվում՝ նաեւ կուտակային) համակարգի ստեղծման համար	3.1 Կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող իրավական ակտերի մշակում	ԼՂՅ սոցիալական ապահովության նախարարություն	ԼՂՅ ֆինանսների նախարարություն	2010-2012թթ.	
4. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, անօթևան կամ բռնության ենթարկված քաղաքացիներին ժամանակավոր կացարանով ապահովում	4.1 Ժամանակավոր օթևանի տրամադրման կարգի մշակում	ԼՂՅ սոցիալական ապահովության նախարարություն	ԼՂՅ կառավարությանն առընթեր ԼՂՅ ոստիկանություն	2010թ. IV եռամսյակ	
4.3.3. Կրթությունը եւ գիտությունը					
1. Հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներում կարեւորվում են կրթության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրումը, ուսումնանյութական կայուն հիմքի ստեղծումը եւ դպրոցական սարքավորումներով ու համապատասխան գույքով համալրումը	1.1 Տարրական դպրոցում համակարգչային հնտությունների ուսուցման հայեցակարգի մշակում	ԼՂՅ կրթության և գիտության նախարարություն		2011թ. II եռամսյակ	
	1.2 Ինտերակտիվ (էլեկտրոնային) ուսուցման համակարգի փորձնական ներդրում	ԼՂՅ տնտեսական զարգացման նախարարություն	ԼՂՅ կրթության և գիտության նախարարություն		
	1.3 Դպրոցների ինտերակտիվ ցանցի ընդլայնում	ԼՂՅ կրթության և գիտության նախարարություն	ԼՂՅ տնտեսական զարգացման նախարարություն, ԼՂՅ ԿԱ արտադրական ենթակառուցվածքների վարչություն		
4.3.4. Մշակույթը					
1. Կառավարությունը լուրջ ուշադրություն կդարձնի գյուղի մշակութային կյանքի աշխուժացմանն ու հետագա զարգացմանը	1.1 ԼՂՅ շրջաններում մշակույթի զարգացման ծրագրի մշակում	ԼՂՅ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն		2010թ. III եռամսյակ	
2. Կառավարությունը լուրջ ուշադրություն կդարձնի թատերահամերգային կազմակերպությունների ստեղծագործական գործունեության աջակցմանը	2.1 Թատրոնի զարգացման հայեցակարգի մշակում	ԼՂՅ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն		2010թ. III եռամսյակ	

3. Մշակույթի ոլորտի կադրային քաղաքականությունը եւ մշակութային կրթությունը կուղղվի մշակույթի ոլորտի կադրերի պատրաստման պետպատվերի մեխանիզմի կատարելագործմանը, մասնագետների կրթության շարունակականության ապահովմանը:	3.1 Գեղարվեստական կրթության հայեցակարգի մշակում	ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն		2010թ. III եռամսյակ	
	3.2 Մշակույթի ոլորտի կադրերի պատրաստման և վերապատրաստման համալիր ծրագրի մշակում	ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն		2010թ. IV եռամսյակ	
4. Նախատեսվում է ապահովել մշակութային ժառանգության պահպանումը, դրանք սերունդների փոխանցման եւ համաշխարհային հանրությանը պատշաճ ներկայացմանն ուղղված աշխատանքների կատարումը	4.1 Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, դրա կենսունակության պաշտպանության հայեցակարգի մշակում	ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն		2010թ. IV եռամսյակ	
	4.2 Թանգարանային ոլորտի զարգացման ծրագրի մշակում	ԼՂՀ կառավարությանն առընթեր զբոսաշրջության վարչություն		2010թ. IV եռամսյակ	

4.3.5. Ֆիզիկական կուլտուրան եւ սպորտը

1. Կառավարությունը ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի ոլորտում առանցքային է համարում ֆիզիկական դաստիարակության անընդհատությունը, դպրոցականների կենցաղում առողջ ապրելակերպի արմատավորումը, հայրենիքի պաշտպանության գործին երիտասարդության ֆիզիկական պատրաստականության ապահովումը, զանգվածային ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումների անցկացումը, բարձրակարգ մարզիկների պատրաստումը, միջազգային ասպարեզում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մասնակցության ապահովումը:	1.1 ԼՂՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի պետական քաղաքականության հայեցակարգի մշակում	ԼՂՀ կառավարությանն առընթեր սպորտի պետական կոմիտե		2012թ.	
	1.2 Մանուկների ու պատանիների բնակության վայրում, ինչպես նաև հասարակական վայրերում ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար համապատասխան պայմանների ստեղծման ծրագրի մշակում	ԼՂՀ կառավարությանն առընթեր սպորտի պետական կոմիտե			2011թ.

4.3.6. Երիտասարդությունը

<p>1. Կառավարության կողմից քայլեր կձեռնարկվեն ստեղծելու սոցիալ-տնտեսական, իրավական-քաղաքական, հոգեւոր-մշակութային, կազմակերպական պայմաններ ու երաշխիքներ՝ երիտասարդների սոցիալական կայացման, նրանց ստեղծագործ ներուժն ի շահ հասարակության լիարժեք օգտագործելու համար</p>	<p>1.1 Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգի բխող միջոցառումների իրականացում</p>	<p>ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն</p>		<p>2010-2012թթ.</p>	
--	--	---	--	---------------------	--

4.3.7. Հայաստանը եւ Սփյուռքը

<p>1. Հայաստանի եւ Սփյուռքի հետ համակողմանի կապերի ամրապնդում, գիտական մտքի, ինչպես նաեւ նյութական եւ մարդկային ներուժի առավելագույնս արդյունավետ ներգրավում հանրապետության առջեւ ծառայած սոցիալ-տնտեսական եւ քաղաքական հիմնախնդիրների լուծման գործում</p>	<p>1.1 Սփյուռքի վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծում</p>	<p>ԼՂՀ արտաքին գործերի նախարարություն</p>		<p>2010-2012թթ.</p>	
	<p>1.2 ՀՀ Սփյուռքի նախարարության հետ համաձայնեցված ծրագրերի իրականացում</p>	<p>ԼՂՀ արտաքին գործերի նախարարություն</p>		<p>2010-2012թթ.</p>	

4.3.8. Միգրացիան

<p>1. ԼՂՀ միգրացիոն քաղաքականությունն ուղղված կլինի Արցախի վերաբնակեցմանն ու հայրենադարձության խթանմանը</p>	<p>1.1 ԼՂՀ տարածքում վերաբնակվող ընտանիքներին տրամադրվող արտոնությունների համակարգի վերանայում</p>	<p>ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարություն</p>		<p>2010թ. IV եռամսյակ</p>	
---	--	---	--	---------------------------	--

4.4. Պաշտպանությունը, հասարակական կարգը եւ անվտանգությունը

<p>1. Հասարակական կարգի պահպանության ոլորտում Կառավարության գործունեության հիմնական նպատակն է՝ հանցագործությունների կանխարգելումը, հասարակական</p>	<p>1.1 ԼՂՀ հանցագործությունների կանխարգելման պետական ծրագրի ներդրում</p>	<p>ԼՂՀ կառավարությանն առընթեր ԼՂՀ ոստիկանություն</p>		<p>2010-2012թթ.</p>	
--	--	--	--	---------------------	--

կարգի ու անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը	1.2 Պետական պահպանության ենթակա կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանության հուսալիության ամրապնդման միջոցառումների ծրագրերի մշակում և իրագործում	ԼՂՀ կառավարությանն առընթեր ԼՂՀ ոստիկանություն		2010-2012թթ.	
4.5. Արտակարգ իրավիճակների կանխարգելումը					
1. Կառավարությունը կարելու է արտակարգ իրավիճակների կանխման ոլորտում համալիր քաղաքականության մշակումը	1.1 Համակարգի բարեփոխումների հայեցակարգի մշակում	ԼՂՀ կառավարությանն առընթեր փրկարար ծառայություն		2010թ. IV եռամսյակ	
2. Կառավարության առաջնային նպատակներից է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության եւ քաղաքացիական պաշտպանության ու փրկարարական աշխատանքների իրականացումը	2.1 Բնակչության պաշտպանության հայեցակարգի մշակում	ԼՂՀ կառավարությանն առընթեր փրկարար ծառայություն		2010թ. IV եռամսյակ	
	2.2 Կառավարման մարմինների և բնակչության պաշտպանության բնագավառում իրագեկման ժամանակակից համակարգի ստեղծման ու զարգացման ծրագրի մշակում	ԼՂՀ կառավարությանն առընթեր փրկարար ծառայություն		2011թ. II կիսամյակ	
	2.3 Մարդուն հրատապ օգնության համապետական համակարգի ստեղծում (եվրոպական 911 համակարգի օրինակով) ծրագրի մշակում	ԼՂՀ կառավարությանն առընթեր փրկարար ծառայություն		2010թ. IV եռամսյակ	
3. Կառավարության առաջնային նպատակներից է բնածին եւ տեխնածին արհավիրքների ու աղետների կանխատեսումը եւ կանխարգելումը	3.1 Տարաբնույթ տարերային աղետների կանխատեսման և կանխարգելման ժամանակակից գործուն համակարգի ձևավորման, ճգնաժամային կառավարման կենտրոնի ստեղծման ծրագրի մշակում	ԼՂՀ կառավարությանն առընթեր փրկարար ծառայություն		2012թ. I եռամսյակ	
	3.2 Ռիսկերի գնահատման տեղեկատվական համակարգերի մշակման և ներդրման ծրագրի մշակում	ԼՂՀ կառավարությանն առընթեր փրկարար ծառայություն		2012թ. III եռամսյակ	
4. Կառավարության առաջնային նպատակներից է արտակարգ իրավիճակների հետևանքների վերացումը եւ առաջնային	4.1 Աղետների հետևանքների առաջնային վերացման և ապահովագրության համակարգերի ներդրման ծրագրի մշակում	ԼՂՀ կառավարությանն առընթեր փրկարար ծառայություն		2012թ. I կիսամյակ	

վերականգնողական աշխատանքների կազմակերպումը	4.2 Պետական ռեզերվների ստեղծման, պահպանման ենթակառուցվածքների բարելավման, համակարգի բարեփոխումների և արդիականացման ծրագրի մշակում	ԼՂԿ կառավարությանն առընթեր փրկարար ծառայություն		2012թ. II կիսամյակ	
	4.3 Տուժած բնակավայրերի բնակիչներին վերականգնողական աշխատանքներում պաշտոնական ներգրավման ծրագրի մշակում	ԼՂԿ կառավարությանն առընթեր փրկարար ծառայություն		2012թ. I կիսամյակ	
4.6. Արտաքին քաղաքականությունը					
1. Կառավարությունը շարունակելու է ջանքեր գործադրել հանրապետության միջազգային ճանաչման խնդրի բացառիկ առաջնայնության ծրագրի վրա հիմնված արտաքին քաղաքականության իրականացման ուղղությամբ	1.1 Արտասահմանյան երկրների կողմից ԼՂԿ ճանաչման գործընթաց սկսելու համար հատուկ կառավարական հանձնախմբի ստեղծում՝ իրավիճակի գնահատման, նոր հնարավորությունների ու գործողությունների ծրագրերի մշակման նպատակով	ԼՂԿ արտաքին գործերի նախարարություն		2010թ. IV եռամսյակ	
	1.2 Շարունակական աշխատանք ԼՂԿ միջազգային ճանաչման, տարբեր եվրոպական և միջազգային կազմակերպություններում ԼՂԿ անդամակցության կամ դիտորդի կարգավիճակ ստանալու ուղղությամբ	ԼՂԿ արտաքին գործերի նախարարություն		2010-2012թթ.	
2. Կառավարության արտաքին քաղաքականության մեջ կարելի է ուղղություն է հանդիսանում միջազգային հանրությանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ընթացող դրական գործընթացների մասին տեղեկացումը, հակադարաբաղյան քարոզչության չեզոքացումը եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նոր՝ հակամարտության հետ չաղերսվող վարկանիշի ձեւավորումը	2.1 Միջազգային կազմակերպություններում ԼՂԿ-ում ընթացող քաղաքական, տնտեսական և հասարակական բարեփոխումների մասին տեղեկացվածության բարձրացմանը, հակադարաբաղյան քարոզչության չեզոքացմանը և ԼՂԿ նոր՝ հակամարտության հետ չաղերսվող իմիջի ձեւավորմանն ուղղված միջոցառումներ	ԼՂԿ արտաքին գործերի նախարարություն		2010-2012թթ.	
	2.2 Աշխատանքների իրականացում ԼՂԿ-ում միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող իրավական դաշտի ստեղծման ուղղությամբ	ԼՂԿ արտաքին գործերի նախարարություն		2010-2012թթ.	

	2.3 Տեղեկատվական-քարոզչական աշխատանքի ակտիվացում՝ աշխարհաքաղաքական նոր զարգացումների հաշվառումով	ԼՂՀ արտաքին գործերի նախարարություն		2010-2012թթ.	
	2.4 «ԼՂՀ-ում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին» ԼՂՀ օրենքի կիրարկման ապահովման Կարգի ընդունում	ԼՂՀ արտաքին գործերի նախարարություն		2011թ.	
	2.5 ԼՂՀ սահմանակետերում համապատասխան ծառայությունների ստեղծում և տեղում ԼՂՀ մուտքի արտոնագրի տրամադրում հանրապետություն ժամանող օտարերկրյա քաղաքացիներին	ԼՂՀ արտաքին գործերի նախարարություն		2010-2011թթ.	
3. Արտաքին քաղաքականության ոլորտում կառավարության գերակա ուղղություններից է նաև արտաքին բարենպաստ պայմանների ստեղծումը՝ ուղղված հանրապետության զարգացման և այդ նպատակով օտարերկրյա ներդրումների ներգրավմանը, Սփյուռքի հետ համագործակցության խորացմանը, միջազգային ինտեգրացիոն գործընթացներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մասնակցությանը և տարածաշրջանային կառույցների հետ համագործակցության աշխուժացմանը:	3.1 ԼՂՀ արտաքին տնտեսական քաղաքականության հայեցակարգի մշակում	ԼՂՀ տնտեսական զարգացման նախարարություն	ԼՂՀ արտաքին գործերի նախարարություն	2011թ.	

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ